

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ

ՍԵՆ ԺՈՎԷՆ ՄԻՆՉԵՆ ԿԱՐԻՆ

ՀԱՐԵԻԱՆՑԻ ԱԿՆԱՐԿ ՄԸ

Շատերու համար քիչ ծանօթ իրողութիւն մ'ըլլալու է այն թէ Սեւ ծովու ափանց վրայ, ուր բաւական թուով հայ բնակչութիւն մը կայ, առանձին կերպով հոժ հայութիւն մ'եղած է Պոնտական շղթային դէպ ի ծով իջնող հովիտներուն մանաւանդ վերնամասերուն մէջ, ի մասնաւորի Տրապիզոնի արեւելէն մինչեւ Ռիլէի արեւելը: Այս հայութիւնը ժԸ դարուն ընթացքին արիւնալից կոտորածներով Բոնադապոսած է իսլամական կրօնէն ընդունել. բայց պահած է շատ մասամբ իւր հայ նկարագիրը, գոնէ մասամբ նաեւ հայերէն լեզուն: Առանձնապէս հայ Համշէնը (քարտէսներու վրայ թրքաձեւ Hemschin) քիչ ծանօթ աշխարհ մըն է. եւ Կիպրոսի նորագոյն եւ լաւագոյն քարտէսն իսկ այս տեղ մեծ սպիտակ բաց մը միայն